



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

«15» նոյեմբերի 2013թ.

N 230/Կ

ք.Ստեփանակերտ

**ԵՐԵՒԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԿԱՅԱԳՐԻ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ`

1. Հաստատել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել տնային ուսուցման պայմանագրի տիպային ձևը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար Յու.Քարամյանին՝ սույն հրամանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության բաժիններին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար Յու.Քարամյանին:



Ս.ԱՍՐՅԱՆ

ԼՂՀ _____

(շրջան, քաղաք)

ՎԿԱՅԱԳԻՐ N _____

_____ (Ա. Ա. Հ)

_____ (ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ)

Ծննդյան վկայական _____

սերիա

համար

ՈՒՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ

Վարչակազմի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/
աշխատակազմի կրթության բաժնի վարիչ՝

_____ (ստորագրություն)

_____ (Ա. Ա. Հ)

Կ.Տ.

« _____ »

_____ 20 _____ թ.

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N _____
Տ Ն Ա Յ Ի Ն ՈՒ Ս ՈՒ Ց Մ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Մ Ա Ն

« _____ » _____ 20__ թ.

_____ (շրջան)

_____ (շրջան)

_____ ուսումնական հաստատություն (այսուհետ՝ Հաստատություն)

Հաստատության տնօրեն _____
(Ա.Ա.Հ)

Հաստատության սովորող _____
(Ա.Ա.Հ)

Ծնող /օրինական ներկայացուցիչ/ (այսուհետ՝ Ներկայացուցիչ) _____
(Ա.Ա.Հ)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն պայմանագիրը կազմված է «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքներին համաձայն:
- 1.2. Պայմանագիրը կնքվում է առողջապահական մարմինների փաստաթղթի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի վկայագրի հիման վրա:
- 1.3. Պայմանագիրը կարող է երկարաձգվել Ներկայացուցչի կողմից՝ նոր ուսումնական տարում սահմանված փաստաթղթերը ներկայացնելու պայմանով:

2. Պայմանագրի առարկան

- 2.1. Պայմանագրի առարկան հանդիսանում է տնային ուսուցման կազմակերպումը

20__ - 20__ ուստարում _____ դասարանի աշակերտ(ուհի) _____

3. Հաստատության իրավունքներն ու պարտականությունները

3.1. Հաստատությունը պարտավորվում է.

- 3.1.1. Ուսուցման ընթացքում սովորողին անվճար տրամադրել դասագրքեր և այլ գրականություն՝ համաձայն Հաստատության սահմանված կարգի:
- 3.1.2. Ներկայացուցչի խնդրանքով սովորողին տալ մասնագիտական խորհրդատվություն:
- 3.1.3. Ըստ Հաստատության սահմանված կարգի՝ անցկացնել սովորողի ընթացիկ և վերջնական ատեստավորում:
- 3.1.4. Մանկավարժական խորհրդի որոշմամբ փոխադրել սովորողին հաջորդ դասարան՝ ըստ Հաստատության սահմանված կարգի, ուսումնական առարկաների ծրագիրը հաջող ընկալելու դեպքում՝ ընթացիկ և վերջնական ատեստավորման արդյունքների հիման վրա:
- 3.1.5. Վերահսկել ուսումնական պարապմունքների կանոնավոր անցկացումը՝ համաձայն դասացուցակի:
- 3.1.6. Հնարավորություն ընձեռել սովորողին՝ մասնակցելու համադպրոցական միջոցառումներին:
- 3.1.7. Ծանոթացնել Ներկայացուցչին իրավական փաստաթղթերի հետ:

3.2. Հաստատությունն իրավունք ունի.

- 3.2.1. Հաստատել սովորողի ընթացիկ ատեստավորման կարգը և ժամկետը:
- 3.2.2. Որոշել սովորողի ուսումնական ծավալի ծանրաբեռնվածությունը՝ համապատասխան իր առողջական վիճակի և ուսումնական ծրագրի ընկալման հնարավորությունների:
- 3.2.3. Մեծացնել ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը բժշկական խորհրդատվության առկայությամբ՝

չբարձրացնելով ուսումնական պլանի հիմնական բաղադրիչների թույլատրելի ծանրաբեռնվածությունը:
3.2.4.Սովորողին չտրամադրել համապատասխան կրթության պետական փաստաթուղթ,
հանրակրթական դպրոցի 9-րդ և 12-րդ դասարանների պետական ատեստավորման պահանջները
չկատարելու դեպքում:

4. Ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները

4.1.Ներկայացուցիչը պարտավոր է.

- 4.1.1.Պայմաններ ստեղծել սովորողի հետ պարապմունքները կազմակերպելու համար:
- 4.1.2.Ապահովել սովորողին գրենական պիտույքներով:
- 4.1.3.Տեղեկացնել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին սովորողի՝ դասից բացակայելու պատճառների մասին:
- 4.1.4.Ժամանակին տրամադրել սովորողի՝ դասից բացակայելու պատճառները հաստատող փաստաթղթերը:

4.2. Ներկայացուցիչը իրավունք ունի.

- 4.2.1. Հաստատությունում ստանալ խորհրդատվություն սովորողի ուսուցման և դաստիարակության վերաբերյալ:
- 4.2.2. Ծանոթանալ կրթության արդյունքների հետ՝ ըստ Հաստատությունում սահմանված կարգի:
- 4.2.3. Ուսուցիչների համաձայնությամբ ներկա լինել դասերին:
- 4.2.4.Ներկա լինել բժշկահոգեբանամանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողին վերաբերող հարցերի քննարկման դեպքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1.Հաստատությունն ըստ սահմանված կարգի, պատասխանատու է.

- 5.1.1. Կրթական ծառայությունները տրամադրելու համար:
- 5.1.2. Սովորողի տնային ուսումը կազմակերպելու համար:

5.2. Ներկայացուցիչն, ըստ սահմանված կարգի պատասխանատու է.

- 5.2.1. Ըստ դասացուցակի սովորողի դասին ներկա լինելու համար:
- 5.2.2. Սովորողի տնային առաջադրանքների կատարման համար:
- 5.2.3. Սովորողի անհրաժեշտ գրենական պիտույքների առկայության համար:

6.Պայմանագրի լուծումը

Պայմանագիրը կնքվում է Հաստատությունում Ներկայացուցչի հետ:

Պայմանագրի վաղաժամկետ լուծումը հնարավոր է.

- Սովորողի և Ներկայացուցչի կողմից Հաստատությունում սահմանված պահանջների չկատարման դեպքում
- Սովորողի կրթության մեկ այլ ձևի անցկացնելու կամ այլ ուսումնական Հաստատություն տեղափոխվելու դեպքում:

7.Այլ դրույթներ

Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները և ստորագրությունները

Հաստատություն

Ներկայացուցիչ

ստորագրություն

ստորագրություն